№ 118 ՅՈՒԼԻՍԻ 14 (26) 1878 ՅՈՒԼԻՍԻ 14 (26) № 118

ԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի Тифлисъ. Редакція „Мшакъ“

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լեզուով

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ի՞նչ է սպասում Թիւրքիային։ — Ներքին տեսութիւն։ Նամակ խմբագրին։ Ներքին լուրեր։ — Արտաքին տեսութիւն։ Անգլօ-Թիւրքաց դաշնադրութիւնը։ Պարսկաստան։ Արտաքին լուրեր։ — Յայտարարութիւններ։ — Տեղեկացոյց։ — Բանասիրական։ Վարդիկ։

Ի՞ՆՉ Է ՍՊԱՍՈՒՄ ԹԻՒՐՔԻԱՅԻՆ

Այս օրերս ստացանք Կ. Պոլսի մէջ Ֆրանսիերէն լեզուով տպված մի բրոշիւր «Défense des interès des détenteurs de fonds ottomans en Turquie» վերնագրով։ Բրոշիւրը խօսում է Թիւրքիայի պարտատէրերի մասին, որոնց թւում գլխաւորապէս աչքի առաջ ունի ոչ թէ օտարազգի տէրութիւնները և օտարազգի մասնաւոր անձինքներին, այլ նոյն իսկ Թիւրքիահպատակ մասնաւոր անձինքներին և Թիւրքիայի մէջ գտնվող մասնաւոր հասատատութիւնները։

Մասնաւոր անձինք, որոնք իրանց ինայողութիւնները կամենում էին ապահովացնել առնելով Թիւրքաց արժէթղթեր, այժմ իրանց կարողութիւնը փչացած և քանդված են տեսնում։ Հիմնարկութիւններ, ինչպէս օրինակ հայոց և յունաց դպրոցները, այդ ձևով տեղաւորելով իրանց ինայողութիւնները և մինչև անգամ իրանց մայր գումարները, այժմ սարսափով տեսնում են, տէրութեան մնանկութեան պատճառով, որ իրանց գոյութեան ամեն աղբիւրները բոլորովին սպառված են....

Թիւրքաց արժէթղթերի ընկնելու պատճառով անթիւ մասնաւոր անձինք գտնվում են այժմ ամենաթշուառ դրութեան մէջ ընկած։ Նրանց ապրելու միակ յոյսը այդ արժէթղթերն էին,— յանկարծ տէրութիւնը հրաժարվում է վճարել նրանց իր պարտքը թղթերի կուպոններով։

Թիւրքիայի պարտատէր եղած ազգաբնակութեան չքաւորութիւնը անկարագրելի է....

Բրոշիւրի հեղինակը դեռ այնքան միամիտ է, որ կարծում է թէ հնարաւոր է զանազան կառավարչական միջոցներով կարգադրել Թիւրքաց տէրութեան ընկած ֆինանսական դրութիւնը։ Նա առաջարկում է հիմնել Կ. Պոլսում մի եւրոպական յանձնաժողով, որի պաշտօնը պէտք է լինի կարգադրել Թիւրքիայի ֆինանսները նոր հիմքերի վրա և հսկել, ինչպէս Եգիպտոսում և Տունիսի մէջ, ֆինանսական նոր եղանակը ճշդութեամբ գործադրելու մասին։

Բրոշիւրի ստանալուց յետոյ մենք, ճշմարիտ է, կարդացինք եւրոպական լրագիրների մէջ որ Բերլինի կոնգրէսի մասնաւոր որոշմամբ այդ տեսակ յանձնաժողովը հաստատվելու է և շուտով սկսելու է իր գործունէութիւնը Կ. Պոլսի մէջ. բայց արդեօք աջողութիւն կունենան այդ տեսակ յանձնաժողովի աշխատանքները,—այդ մասին մենք սաստիկ կասկածում ենք....

Ոչ. մեր կարծիքով ամեն բարելաւութիւնները Թիւրքիայում երևակայական են։ Թիւրքիան, որպէս պետական մարմին, կորած է։ Մօտիկ ապագայում նա կործանվելու է որպէս պետութիւն, նա կտոր կտոր ընկնելու է....

Այդ շատ լաւ հասկացել է Անգլիան և այժմից պատրաստվում է Թիւրքիայի հողերի ժառանգ դառնալ, հոգ տանելով, նախ և առաջ, խեղդել մանաւանդ Ասիայի քրիստոնեայ ազգերի քաղաքական ձգտումները։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Թիֆլիս, 11 յունիսի

Քաղաքներում և գիւղերում պետական բոլոր միջնակարգ և տարրական ուսումնարանները փակել են իրանց աշակերտների և վարժապետների մտածելու համար ասում էր ժողովրդական կարծիքը այդ մարդու մասին, որ նա աւելի գեռնի տակին է ապրում, քան թէ երեսին։ Սա մի խորհրդաւոր միտք է, որ տալիս է ժողովուրդը խորամանկ մարդկանց։ Չը գիտես ինչ էր սկզբում տէր Սակուղը, բայց յետոյ քահանայ դարձաւ... Եւ քահանայութիւնը յայտնի է թէ սկզբներում ինչպիսի եղոտ և յարմար պաշտօն էր անյագ, անգոհունակ մի մարդու համար։

Արժանապատիւ, ողորմածհոգի այդ կողմերի գործակալը որ ոչնչով չէր զանազանվում տէր Սակուղներից եթէ ոչ իր կեղտոտ կաշառառութիւններով, բարերար դարձաւ Սակուղին։ Տէր Սակուղը իր կողմից մեծաւորների աչքը յաղեցնելու, իր նուէրների աղբիւր չինել էր ժողովրդին. դրա համար էր որ զուր բամբասում էին խեղճին թէ այսքան այնքան առնում, կողոպտում, գզլում, գողանում է.... Աղքատամբոյրներ, ժամոցներ, մատաղներ մեր քահանայի համար, նաև յիշելիքներ, պտղանաներ, պսակադրաններ և այլն, և այլն.—այս ամենը նորից բաւականացուցիչ եկամուտ էին կազմում մեր տէր հօր համար։

Վարդիկի հայրը սկզբում իր քրտամբ վաստակով ապրում էր իր համար. նա ունէր 3 կով, չորս եզը, մի ձի և այլ կահ-կարասիք, որ անհրաժեշտ է մի գիւղական տան համար։

Բայց մի սխալ, որ իր կենդանութեան միջոցին գործեց Վարդիկի հայրը գուցէ ամենակարևոր մի դէպքի ստիպմամբ, իր տան աւերիչ պատճառ դարձաւ։ Այդ սխալը ոչինչ չէր, եթէ ոչ 20 ռուբլ պարտքը, որ արաւ նա Տէր-Սակուղից ամսական էլ 50 կոպ. շահ յատկացնելով մուրհակում 20 ռուբլ. սա մի մեծ դրամագլուխ էր մեր կողմերում, մանաւանդ եթէ Նիկոլայի արծաթ ռուբլ էր, նրանց համար որոնք միտք ունէին կոյր կնոջ պէս նստել և փողի շահով ապրել հազար տների ծուխը մարելով և օտարի իրաւունքը իր ձեռքն առնելով... Վարդիկի հօր մահից յետոյ Տէր-Սակուղը գիւղի հաստատուն տանուտէրի օգնութեամբ, պահելով մուրհակը, շահը շահի վրա դիզելով, մի ահագին գումարի պարտաթուղթ էր շինել, որից հոգով մարմնով չէր կարելի ազատվել մեռնելուց յետոյ էլ։ Այդ մուրհակի հրամանով և հրամանով գրպանի խղճին ենթարկված պ. տանուտէրի, Տէր Սակուղը խլեց Վարդիկենց բոլոր կայքը... մի կով անգամ չը թողեց երկու որբի կերակրելու համար.... Տուն, այգի, գոմ, պղինձ, կարպետ, մինչև անգամ չիշ ու չամփուր—բոլորը գրաւելուց յետոյ Վարդիկի խեղճ քրոջը աղախին (քօթ) վերցրեց իր տան մէջ, որպէս երկոտանի գրաւական իր ապառիկ փողերի.... Այս արարքի դէմ մեր գրիչը լռում է, այս ցած ու կեղտոտ իրողութեան հանդէպ մեր ձեռքը անկարող է դատաստան անել հանդուցեալ Տէր-Սակուղին. այդ թողնում ենք Աստուծու և աւելի լաւ, ընթերցողի դատաստանին....

Մեր տունը չէն տներից մինն է ամբողջ նահանգում։ Հայրս գիւղատնտեսական, ի հարկէ հնադարեան մեթոդով, գործերի տակ մտած միշտ հարկաւորութիւն ունէր տարեկան գոնէ 3—4 ծառայ (նոքար) ունենալու։ Նա որպէս հին մարդ իր ամեն կողմերով, միշտ սիրում էր իր ոչ—գովելի խղճի սահմանափակ օրէնքագրով վարվել ուրիշների հետ։ Նա կեանքի ամենաանգութ զինուորն էր այդ դէպքում, երբ բանը վերաբերում էր հաշվի։ Նա կամենում էր ամեն բան էժան առնել, կոպէկի համար մի ժամ խօսել և օրինաւոր գին չը հատուցանել արժանաւորին։ Ծառաների վարձի վերաբերութեամբ, որովհետև հաւատացած էր թէ ծառաներին տուածը կորած է, շատ խիստ էր, տարեկան վճարում էր ոչ աւելի քան 20—25 ր. թէ կուզէ ամուսնացած անագին մարդ էլ լինէր ծառան, բացի այս շոր և հաց։ Հանգիստ մի բօպէ չէր թողնի ծառային և ես մի անգամ ականատես էի, երբ հայրս հիւանդ էր հետևաբար ծառաներից երկուսը գործ չունէին անելու, նա հրամայեց ամբողջ օրը դուռը իզուր բաց ու խուփ անել, որպէս զի պարապ չը մնան....

Այս միջոցներում հայրս նոր ծառաներ վարձելու մտքով գնացել էր մօտակայ գիւղերը։ Նա հանդիպում է որբ Վարդիկին. Տէր-Սակուղին խոստանում է տարեկան 12 ռուբլ, իսկ շոր ու հաց որբին և նրան ծառայ է վարձում. Տէր-Սակուղը համաձայնում է և մինչև անգամ խնդրում է որ որբի տարեկան ռոճիկը առանց յետաձգելու հասցնէ իրան։

Այսպիսով խեղճ Վարդիկը ազատվում է Տէր-Սակուղից թողնելով նրա մօտ իր քրոջը։

II

Ցուլիս ամսի օրերը այնքան մեղմ են լինում, որքան այդ կը վայելէր լեռնափակ մի ձորակին։ Կիրակի օրերում սովորաբար ես վաղ էի վերկենում աւելի նրա համար, որ եկեղեցի գնամ։ Ես ունէի գեղեցիկ ձայն և սրանով մեր եկեղեցու զարդն էի, ինչպէս ասում էին ծերունիները։ Ես գիտէի դեռ 12 տարեկան հասակում ոչ միայն անգիր փոխ ասել, որոնցից ոչինչ էլ չէի հասկանում, այլ և պատարագի երգերը երգել... Այդ օրերում որքան ջերմեռանդ էի ես... Առանց Աստուծու անունը տալու և երեսիս խաչ հանելու ոչինչ չէի անում... Խիստ հաճելի էի իմ ձայնով մանաւանդ հօրս։ Յատկապէս իմ պատճառով հէնց որ «խորհուրդ խորին» կը սկսէի հայրս մի խումբ մոմ բոլորի ծայրը խմբովին վառած, որպէս իշխանաւոր, կը մօտենար վերարկուն ուսերից կված եկեղեցու մեծ ջահին և կը կպցնէր հերթով մոմերը, միւս կողմից էլ կոլորէր ջահը դատարկ մոմակալները իր կողմը քաշելու։ Այդ միջոցում չեմ մոռանում յիշել թէ ինչպէս երեցփոխ Գէվոն, հասարակութեան արդէն ծնած Մեսեան, հօրս աւելի ևս պատիւ տալու համար կօգնէր նրան բռնելով եանից արդէն վայր ընկնել կամեցող վերարկուն.... Ի՞նչեր ասես որ չէր գրաւում այդ ժամանակվայ հասակիս ամեն բան ուշքի տակ ձգող մանկական գլուխս....

Այս կիրակի հայրս դեռ չէր վերադարձել ծառայ ճարելու տեղից։ Պատարագից յետոյ նըշխարի կտորը ձեռքումս սեղմած տուն էի վազում «ողորմի Աստած» ասելով ճանապարհում պատահողներին. մէկ էլ տեսնեմ ճանապարհի ծայրում մեր սպիտակ ձիու վրա նստած, որին բոլ ձի էլ էինք անուանում, գալիս է հայրս։ Ես

ՎԱՐԴԻԿ

I

Ես փոքր էի։

Մանկութեան վաղանցիկ օրերի իւրաքանչիւր մի անցքը այս օր էլ անմեռ պահպանում է իմ սրտում իր անջնջելի քաղցր յիշատակը։ Ո՞ր տարվայ Զատիկը, ո՞ր տարվայ (վարդավառին) սուփ Քրիքորի ուխտը, Ջանգիլումների նկարագրութիւնը, կալերի կաթնովն ասէք, որ, ինչպէս իմ, նոյնպէս և իւրաքանչիւր գիւղական մանուկի սրտից մոռացվէր, կորչէր, անհետանար, եթէ որ հոգեկան մի հիւանդութիւն խանգարած չը լինէր մարդկային բանականութիւնը... Կեանքիս այդ թանկագին օրերը, որ իսկապէս բանաստեղծական խօսքով գարուն են ձմեռաշատ մարդկային կարճատև հասակի համար,— մի անցքը ահա Վարդիկիս յիշատակագրութիւնն է։

Վարդիկը, մի խեղճ որբ, մեր գիւղի հարևան մի հայի որդի էր։ Նրա թշուառ ծնողները աշխարհիս երեսին իրանց մահից յետոյ թողել էին միմիայն երկու զաւակ՝ Վարդիկը և Մէրիկը։ Տէր-Սակուղը, Վարդիկենց գիւղի հոգևոր հովիւն էր։ Այս մարդը, որի երեսից ես խորշում էի, լղարած, բարակած մի «թղան-բողոճի» էր նման։ Թանագոյն դեղին թշեր, սրածայր, նեղ և երկար քթով, որ գլխաւոր յատկանիշն է Սակուղանց ցեղակիցների, սուր կզակ, տափակ ճակատ, ցանցառ միրուքով—կարճ—մի դիակ, որ զոհ էր անբնական պատճառներից առաջացած կրծքացաւութեան. ամբողջ այդ չնչաւոր խաղալիքը (կուկլայ) արտադրում էր մի այնպիսի կերպարանք, որից ենթադրելու էիք վտանգաւոր հոգի.... Իր ընդ միշտ լուռ և չարութիւնք

համար իրանց դռները։ Աշակերտները հասակ առնելու և առողջութիւնը կազդուրելու համար ազատ խաղում են և հանգստութիւն վայելում, իսկ ուսուցիչները ծանր աշխատանքի յոգնածութիւնը ամարանոցների հովիտներում թողնելով՝ հանգչում են, նոր ոյժ են ստանում, որ սեպտեմբերից մինչև ապագայ ուսումնական տարվայ վերջը կարողութիւն ունենան նոր ուժով և եռանդով ուսում մատակարարել իրանց հովանաւորութեան յանձնված երեխաներին։

Արդեօք ինչ են անում մեր աշակերտները և հայ ուսուցիչները։ Քաղաքիս ծխական ուսումնարանների, համարեա թէ կէսը աւելի մարդասիրութեամբ դեռ իրանց դռները չեն փակած իրանց աշակերտների և վարժապետների համար, դեռ նրանց մէջ շարունակվում է ուսումը ամենայն ջերմեռանդութեամբ։ Ինչի. ամենայն օր սպասում են թէ այսօր կամ վաղը հարցաքննութիւն պիտի լինի, թէ թեմական վերատեսուչ—փաստաբան—մանկավարժ—խմբագիրը այսօր կամ վաղը պիտի գայ հարցաքննէ աշակերտներին, որովհետև նրա խիստ և սարսափելի հրամանն է չարձակել աշակերտներին մինչև որ ինքն անձամբ քննէ ամենայն առարկաներից։ Գուցէ պ. մանկավարժ — թեմական-վերատեսչի գալը փաստաբանական սովորութեամբ մինչև սեպտեմբերը տևէ, այն ժամանակ թէ մեր քաղաքի այդ հարցաքննութեան սպասող աշակերտների և վարժապետների դրութիւնը ինչ կը լինի, թողնում ենք՝ նրա դատողութեանը։

Վրաստանի և Իմերէթի թեմի որ քաղաքի կամ գիւղի ուսումնարանի մասին կամենաք տեղեկութիւն հաւաքել, ամեն տեղից էլ կը լսէք խռովութիւն և ահագին չփոթ ուսուցիչների և հոգաբարձուների կամ երեցփոխանների մէջ։

Եթէ գլխաւոր պատճառները հետախուզելու հետաքրքրվիք, կիմանաք որ այս ամենայն խռովութիւնների հիմքը թեմական վերատեսչի այն անհոգութիւնն է, որ ունի դէպի թեմիս դպրոցները։ Մեր գիւղական դպրոցները լսել են, որ այս երկու տարի է նոր թեմական վերատեսուչ է կարգվել, բայց դեռ երեսն անգամ չեն արժանացել տեսնելու, երևի այն պատճառով որ նա անմերձենալի մի էակ է համարում ինքն իրան։ Երկու տարի է որ մեր թեմի բոլոր դրպրոցները թէ քաղաքներում և թէ գիւղերում կառավարվում են առանց մի որ և իցէ պրոգրամմայի, որովհետև պ. մանկավարժ նոր թեմական տեսուչը նախկին թեմական վերատեսչի ուսուցչական ժողովի մշակված պրոգրաման ըստ ամենայնի անբաւարար գտնելով, մեր արդի ուսումնարանների համար, խստիւ արգելեց այս ունենալ ուղեցոյց և ինքն խոստացաւ ութ օրվայ մէջ կազմել մի նոր պրոգրամմա որը այս երկու տարի է երկունքի մէջ տանջվելով—տանջվելով՝ չէ ծնում—լոյս աշխարհ չէ տեսնում։ Եւ ինչ առաջադիմութիւն պէտք է սպասել այն դպրոցներից, որոնց տիրացու կամ խալիֆայ ուսուցիչները ուսում են մատակարարում այնպէս, ինչպէս իրանց խելքը թոյլ է տալիս իրանց։ Ի՞նչ իրաւունք ունի թեմական վերատեսուչը մեր դպրոցներից առաջադիմութիւն և կարգապահութիւն պահանջել, երբ ինքն փոխանակ ուսումնարաններին այցելելու, ուսումնարանների աչքի ընկնող պակասութիւնները ուղղելու, ուսուցիչների դասախօսութիւնները լսելու և հարկաւոր նկատողութիւնները և փոփոխութիւնները անելու, հաշտարար և նահանգական դատարաններում իրաւաբանական գործերով է զբաղված և մինչև անգամ, եթէ հարցնելու լինէք, թէ այս ինչ քաղաքում կամ գիւղում ինչ ուսումնարաններ կամ ուսուցիչներ կան, պէտք է անշուշտ ստանաք՝ անբաւարար և անգոհացուցիչ պատասխան։ Ինչպէս տեսնում ենք և լսում ենք, պ. թեմական վերատեսուչը շատ անկանոն է վարվում մինչև անգամ ուսումնարանների տնտեսական հաշիւներում։ Նա պահանջել է աշակերտներից և աշակերտուհիներից միանուագ տարեկան երեք երեք ռուբլի դասական պիտոյքների համար վարձ, բայց սեպտեմբերից մի քանի ռուբլի բան միայն առել և բաժանել է, իսկ մնացածը աշակերտները իրանք իրանց փողով են առել։

Նոյնպէս ականատես ենք, որ նա հալածում է հասկացող ուսուցիչներին որոնք պահանջում են նրանից ուսումնարանների վրա ուշադրութիւն դարձնել և նրանց դասերը պակասեցնելով կամ իսպառ հրաժարեցնելով գործից, նրանց տեղը յանձնում է իր ազգականներին, որոնց չնորհիւ ահա կաթուղիկոս Ս. Գէորգ եկեղեցու օրիորդական ուսումնարանը բոլորովին փակվեցաւ, յիսունից աշակերտների թիւը իջնելով եօթնի միայն։

Այս անգամ այսքանս բաւական համարելով մեր բազմապաշտոն և անփորձ թեմական վերատեսչի համար, իբրև ազգի մի աննշան անդամ առաջարկում ենք՝ որ 1) կամ պ. թեմական վերատեսուչը կատարէ իր պաշտօնը ոչ թէ միայն ձեի համար, այլ իրօք. 2) պատրաստէ հայոց ծխական ուսումնարանների համար պրոգրամմա, 3) չը հալածէ, իր ազգականներին տեղ և պաշտօն չտնելու համար, փոքր ի շատէ բան հասկացող ուսուցիչներին, իսկ հակառակ դէպքում հրաժարվէ իր պաշտօնից իր տեղը տալով իրանից աւելի հասկացողներին. որովհետև կատարեալ անիրաւութիւն է ռոճիկ ստանալ և ոչինչ գործ չը կատարելը։

Մարտիրոս Մկրտչեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ մեզ հաղորդում են որ պ. Ս. Պատկանեանը Նոր-Նախիջևանի բարբառով մի պիէսա է գրել «Պամպուլիս» անունով։ Պիէսան տուած է ցենզուրային։

—

ԼՕՌՈՒ գաւառից մեզ հաղորդում են, որ թեմական տնտուչը այնտեղի ուսումնարանները դեռ ոչ մի անդամ չէ այցելել։

—

«Донск. Пчела.» լրագիրը հաղորդում է, որ յունիս ամսի ընթացքում Ռոստով քաղաքի հիւանդանոցում եղել են 191 հիւանդ (այդ թվից 43 տիֆով հիւանդներ), որոնցից առողջացել են 105 և մեռել են 18 մարդ։ Յուլիսի 1-ին հիւանդներից մնում էին 68։

—

Մի և նոյն լրագիրը հաղորդում է, որ հրդեհները Ռոստովում սովորական երևոյթ են և բաւական վնասներ են պատճառում քաղաքում։ Լրագիրը մասնաւոր անձանց խորհուրդ է տալիս իրանց տներում պահել հրդեհներ հանգցնող մեքենաներ։ Այդպիսի մեքենաները լրագրի կարծիքով մանաւանդ անհրաժեշտ են գիւղերում։

—

ԲԱԳՈՒԻՑ մեզ գրում են. «Էջպէտ այստեղի վաճառականոցում կախ է տուած մի թուղթ կրպցրած տախտակ, որի վրա նշանակած է, թէ ինչ գներով պէտք է ծախվեն օրական-պիտոյքները, բայց դրա վրա ոչ ոք ուշադրութիւն չէ դարձնում և ամեն բան նշանակած գնից թանգ է ծախվում։ Եթէ վաճառողին յիշեցնես նշանակած գները, նրանից միայն յիշոցներ կը լսել։ Քաղաքային վարչութիւնը այս իրողութեան վրա ոչինչ ուշադրութիւն չէ դարձնում։»

—

Բժիշկ պ. Միրիմանեան գրում է մեզ հետեւեալը. «Թոյլ տուէք ինձ, պարոն խմբագիր, ձեր լրագրի միջնորդութեամբ առաջարկել պ. Մէլիքզադէին իր գեղեցիկ և շատ հետաքրքիր վէպ «Ջալալէդդինը» թարգմանել ռուսերէն և ապել Թիֆլիսի ռուս լրագիրներից մէկում։ Ես յոյս ունեմ, որ այդ վէպը մեծ համակրութեամբ կը կարդացվի ռուս հասարակութենից»։ Ջալալէդդին արդէն մաս մաս տպվում է «Тифл. Вѣстн.» լրագրի մէջ։

—

ԹԻՖԼԻՍԻ հին մաքսատան փողոցում գտնվող Ֆրանսիուհի տ. Տօլէի մոմերի գործարանը այրվեց յուլիսի 10-ին գիշերը։ Ասում են, որ վնասը հասնում է մինչև 30,000 ռուբլ։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՆԳԼՕ-ԹՒՐՔԱՑ ԴԱՇՆԱԴՐՈՒԹԻՒՆԸ

Պ. Ա. Հ. Լայարդ մարկիզ Սալիսբիւրիին։ Թէրապիա, 1878 յունիսի 5-ին։—Տէր, պատիւ ունեմ ուղարկել այս գրութեան հետ Անգլիայի և Թիւրքիայի մէջ կապված պաշտպանողական դաշնակցութեան պայմանագիրը որի նպատակն է ապագայի համար ապահովել Ռուսաստանի դէմ սուլթանի երկիրները Ասիայում։ Երէկ ստորագրվեցաւ Եըլդըզի կայսերական պալատում Թիւրքաց արտաքին գործերի մինիստր Սավֆէտ-փաշայից և ինձանից իբրև արտակարգ դեսպան և հաւատարմատար նորին մեծութեան։ Ա. Հ. ԼԱՅԱՐԴ։

Պայմանագիր պաշտպանողական դաշնակցութեան Մեծ-Բրիտանիայի և Թիւրքիայի մէջ, ստորագրված 1878-ի յունիսի 4-ին։

Նորին մեծութիւն Մեծ-Բրիտանիայի և Իրլանդիայի միացեալ-թագաւորութեան թագուհին, կայսրուհի Հնդկաց և Նորին կայսերական մեծութիւն սուլթանը, երկուսն էլ անկեղծ ցանկութեամբ օգևորված որ ընդարձակեն և ամրացնեն երկու տէրութիւնների մէջ բարեբաղդաբար գտնված բարեկամական յարաբերութիւնները, որոշեցին հաստատել

վազեցի նրա առաջ, որ սովորականի պէս ողջունեց «ողորմի ծնողանցդ» պատասխանելով, բայց ինձ չառաւ իր գիրկը ձիու վրա, ինչպէս նա այդ միշտ արել էր։ Փոքր ինչ վշտացած ինձ ու ինձ հազիւ նշմարեցի որ հօրս քամակին երկու ձեռքով մէջքը պատատած—կպած էր ինձ նման մի մանուկ 10 կամ 11 տարեկան։ Հայրս վեր բերեց երեխային։ Առաջին հայեացքովս ինչպէս քնքշասիրտ երեխայ, ինձ վրա այդ մանուկի գեղեցիկ գծագրութիւնը ունեցաւ խիստ կպչող և մտերմական տպաւորութիւն... Ես ուրախացայ այդպիսի սիրուն ծառայի վրա և սրտով ընտրեցի նրան իմ հանապազօրեայ խաղընկերը։ Բայց այս տպաւորութիւնը առ այժմ չը կարողացայ աշկարանել—յայտնել հօրս և երեխային—որովհետև հայրս չէր սիրում ծառաների հետ բարեկամութիւն և ընտանի խօսակցութիւն։ Նրա կոպիտ ասիական քաղաքականութիւնը պահանջում էր մեծ խստութիւն դէպի ստորադրեալները։ «Ծառան երես կառնի, էլ պէտք չի գալ...» ասում էր հայրս։

—Բայց եկեղեցի գնացել ես. հօրս առաջին հարցը այս եղաւ, որ կարծես նկատելով առ մանուկն ունեցած իմ արտայայտվող ուրախութիւնը ուզեց խօսքով անի ինձ, որ այդ մասին ոչինչ չասեմ։

«Այո», պատասխանեցի ես, բայց նոյն սիրալիր հայեացքը չը հեռացնելով անծանօթ մանուկից։

—Քեզ համար պտիկ նօքար եմ բերել. ասաց հայրս զբաղեցնելով ինձ։

«Նօքար» խօսքը վիրաւորեց ինձ, որ գուցէ վիրաւորական եղաւ և խեղճ երեխայի համար, և հօրս գիտակցութեամբ գործած սխալը ուղղելու մտքով «անունն ինչ է» հարց արեցի։

—Վարդիկ։

«Վարդիկ... ինչ լաւ անուն է. Վարդիկը անշուշտ իր անունի պէս լաւ տղայ է...»

—Լաւ որ չը լինի ինչ կը պահեմ. շարունակեց հայրս և նշան տուեց տուն գնալ։ Նա բռնեց իմ ձեռքը միւս ձեռքով ձին էր քաշում յետևից։ Վարդիկը վիզը ծռած, որպէս օտար տղայ, այս այն կողմ յափշտակված նայելով հետևում էր մեզ։ Հօրս հարցերին թէ ինչպէս մեքենայօրէն պատասխանում էի և թէ ովքեր էին պատահում հօրս—ոչ մինը չեմ յիշում. պատճառուչքս Վարդիկի վրա էր. ոտքերս քայլում էին, բայց վիզս յետ թեքած համարեա չէի կշտանում սիրելի Վարդիկից, որ երբեմն քաղցր ժպիտով նայում էր ինձ իբրև պատասխան իմ զգացման և երբեմն էլ ուշք չէր դարձնում որ ես իրան եմ նայում, այլ մտիկ էր տալիս իր շրջապատող օտար տեսարաններին... Ամարանոցի, մանաւանդ մեր ամարանոցի տները երկոտանիներից թւով երբեմն շատ և շատ են լինում. մեծաբեղ, գամփռ, կեռպօչ, պարսկապատկեր, աղուէսացու—հազար տեսակի—այդ տները երբեմն սատանայական հնարամտութեամբ յարձակվել գիտեն անսպասելի տեղից մանաւանդ խեղճ անծանօթի վրա։ Ես ոչ միայն աղօթում էի, որ այդ անիրաւները մի այդպիսի բան չանեն խեղճ մանուկի հետ, այլ մինչև անդամ գիտնական Մարտիրոսի սովորացրած «ցուպ քո և գաւազան...» սաղմոսի մի տունը ասեցի, որ երբեմն այդ պարոնը ասում էր շուն կապելու համար, երբ ամառները գալիս էր ամարանոց մի քիչ հաստանալու, ես խիստ ուրախ կը լինէի միայն չը թողնելու Վարդիկին խնդրել հօրիցս թողնէր նրա հետ գայի... Զարմանալի է ճշմարիտ, ինչ բան այդ անծանօթ, կեղտոտ երեխայի մէջ գրաւում էր իմ ուշադրութիւնը։ Նրա հագուստը պատառոտուն, ոտացները մինչև ծնկները մաշված, ոտքերը մերկ, մի արխալուղ, որ անունով միայն էր, զզզված ոչ թևք ունէր, ոչ փեշ. մէջքի վրա հաստ թոկի կոտորը քամարի տեղ էր ծառայում. գլխարկ չունէր. նրա երեսհարքը նիհար, ոսկորները համարվում էին. ձեռքերը կեղտոտ որպէս և ոտքերն ու գլուխը։ Դժգոյն դէմքից ես հաւատամքի պէս ընդունեցի, որ հայրս այդ խեղճ մանուկին գտել էր գերեզմաններում։ Աչքերը կանանաւոր գծի վրա, քիթը իսկ նկարչական, դէմքը յունական պրոֆիլի պատկանող, գծագրութեան մէջ արտայայտում էր այնպիսի սիրտ, որ ես մանկութեան հասակում անուանում էի «գառն»։ Խոր ընկած թէրը գեղնած և կարծես չորացած կաւահողի նման, արևից ճեղճեղված շրթունքը ենթադրել էին տալիս նրա հիւանդոտ լինելը։ Ճակատը լայնադիր. այսօր էլ ես յիշում եմ իսկութեամբ այս ամենը և նոր հասկանում թէ բնական ձիրքերը արտաքին չփոթող հանգամանքների հետ խառնված, որքան յափշտակում են մարդկային սիրտը... Ահա թէ ինչի առաջին իսկ անդամում ինձ վրա լաւ տպաւորութիւն գործեց այդ մանուկի ներկայութիւնը....

III

Անցել էր մի քանի շաբաթ։

Որքան հայրս ընտանեկան կեանքում խիստ, «պէծ ու կրակ» անընկճելի, հաստատակամ մի մարդ էր, նոյնքան և մայրս պարկեշտ, գթառատ, ազնուասիրտ տանտիկին էր մի օջախի և սիրասուն բարոյական դաստիարակ իր մանուկների համար, որ շատ չէինք թւով.—երկու եղբայր և մի քոյր։ Քրոջս, եղբօրս և իմ սէրը դէպի Վարդիկը աննկարագրելի էր։ Մայրս էլ տեսնում էր այդ բարեգթութիւնը, շատ էր ուրախանում և համարեա ոչնչով չէր զանազանում մեզանից Վարդիկին։ Եւ ինչքան էինք սիրում մենք (այսինքն և Վարդիկը) մեր մօրը...

Ով տարով էր մեծանում Վարդիկը օրով էր հասակն առնում. այժմ իմ և եղբօրս փոխնորդ շորերը հագած նա նմանվում էր իր անունին առանց «իկ» մասնիկի։ Ես այժմ լաւ ծանօթ էի նրա անցեալի հետ. բայց մի բան ինձ խիստ էր զարմացնում։ Վարդիկը չը գիտէր ով է իր ծնողը։ Չը գիտենալ ով է իր ծնողը—սա ինձ համար չափազանց օտարոտի բան էր։ Եւ քանի որ ես հարց էի անում այդ մասին Վարդիկը ինձ պատասխանում էր թէ իրանց գիւղի տէրտէրը—Տէր-Սակուղը—ասում է, որ ինքն ու իր քոյրը գտնովի են և թէ իրանց գտել են մի օր յանկարծօրէն։

Երկու երեխայ յանկարծ գտնվել են—զարմանալի էր ճշմարիտ։

Ես այդ միջոցում ոչինչ հասկացողութիւն չունէի մարդու ծննդեան որպիսութենից և հաւատում էի, որ Աստուած խիստ բարի է, որ յանկարծ ստեղծել է մի այդպիսի սիրուն ու խելօք մի Վարդիկ։ Այս մասին ես երկնչում էի բացատրութիւն պահանջել նոյն իսկ մօրից։ Մեծ հոգս էլ չէր, ասենք, այդ հարցի մասին զբաղվել, որովհետև գաղտնի մտքեր ու կասկածներ անել իմ բարեկամի վրա ես ընդունակ չէի... բայց նոր եմ հասկանում որ լաւ է եղել հարց չանելս, որովհետև մեր ընտանիքումն էլ ինչպէս և հայ շատ ընտանիքներում բնագիտութեան ամենահասարակ երևոյթներն էին կացնով ջախջախվում, ուր մնար մարդակազմութիւնը. .

Վարդիկը նորչկեանքի մէջ զուարթացաւ. այո, նա մեզանից մինն էր ամեն բանով և մանաւանդ խիստ ուրախ էր որ մի սիրելի մայր ունէր մեզ հետ։ Մեր դրացի հեզահոգի Վարդիթերը, որ իր ազնուասրտութեամբ շատ սիրելի էր մօրս, կրակի մէջ էր մնացել։ Մայրս միշտ ամեն կիրակի կանչում էր նրան Վարդիկի գլուխը լուանալու, ինքը ջուրն էր ածում, մենք էլ շրջապատած կատակներ էինք անում։

«Վարդիկ, աչքերդ խուփ արա չը քոռանաս» ասում էր քոյրս։

«Ցօ, էս օր պաս է. բերանդ կալ սապոն չուտես...» խօսեցնում էր եղբայրս, իսկ ես խոտոտ էի ածում, կամ մէջքին կամաց զարկում... Վարդիթերն էլ սապոնոտ, ծերացած ջաղացպանի նման ձեռքով աշխատում էր մեզ խփել—բայց որտեղ—մենք ծլկվում էինք....

«Իրիցի աղջիկ, ասում էր Վարդիթերը. հէնց սրտովդ են երեխաներդ. էսքան էլ սիրածակ երեխայ կլեն... Աստած քեզ բաշխի։»

Մայրս էլ գոհ էր, որպէս մեզանից, նոյնպէս Վարդիկից. իսկ հայրս երբեմն երբեմն գովում էր նրան, ասում էլ էր մեզ մօտ թէ Վարդիկը «ականջով» տղայ է։

Այս էլ էր բաւական ուրախացնելու մեզ....

(Կը շարունակվի)

պաշտպանողական դաշնակցութեան մի պայմանագրութիւն այն նպատակով որ Նորին կայսերական մեծութեան սուլթանի երկիրները Ասիայում ապահովվեն ապագայի համար։ Հետևապէս, այս գործի համար իրանց հաւատարմատար ընտրեցին հետևեալները։

Նորին մեծութիւն Մեծ-Բրիտանիայի և Իրլանդիայի միացեալ-թագաւորութեան թագուհին, կայսրուհին Հնդկաց, ընտրեց մեծապատիւ Օստին Հէնրի Լայարդին, իր արտակարգ դեսպանին և հաւատարմատարին Բ. Դրան մօտ և Նորին կայսերական մեծութիւն սուլթանը ընտրեց իր արտաքին գործերի մինիստր Սավֆէտ-փաշային որոնք իրանց լեզոր արտօնագիրները միմեանց յանձնելուց և նրանց օրինաւոր գտնելուց յետոյ, համաձայնված են հետևեալ յօդուածների վրա։

1) «Եթէ Ռուսաստանը չը վերադարձնի Բաթում, Արդահան, Ղարս կամ այդ տեղերից մինը և եթէ փորձ փորձի տիրել, որ և իցէ ժամանակում, Նորին կայսերական մեծութեան սուլթանի Ասիայում ունեցած հողերի ուրիշ որ և իցէ մասին, որոնք հաստատված կը լինեն խաղաղութեան վերջնական դաշնագրով, Անգլիան յանձնառու է լինում այդ դէպքում միանալ Նորին կայսերական մեծութեան հետ պաշտպանելու համար այդ երկիրները զէնքի զօրութեամբ։ Դրա փոխարէն, Նորին կայսերական մեծութիւն սուլթանը խոստանում է մտցնել հարկաւոր եղած բարեկարգութիւնները (որոնք յետոյ կորոշվեն երկու տէրութիւններից) վերոյիշեալ երկիրներում Բ. Դրան քրիստոնեայ և այլ հպատակների լաւ կառավարչութեան (ադմինիստրացիա) և պաշտպանութեան համար և որպէս զի Անգլիան կարողանայ ապահովել իր խոստումը գործադրելու համար հարկաւոր եղած միջոցները, Նորին կայսերական մեծութիւն սուլթանը, բացի այդ, հաւանում է յանձնել Կիպրոս կղզին Անգլիային, այնտեղ բնակվելու և կառավարելու համար։

2) «Այս պայմանագրութիւնը կը վաւերացվի և վաւերացրած օրինակները փոխադարձ իրար կը յանձնվեն մէկ ամվայ միջոցում և եթէ կարելի լինի աւելի շուտ։»

Գ. Ա. Հ. Լայարդ մարկիզ Սալիսբիւրիին։
Թէրապիա, 1878 յուլիսի 1-ին։ Տէր, պատիւ ունեմ այս գրութեան հետ ուղարկել Կիպրոս կղզու Անգլիայից գրաւվելու համար Անգլիայի և Թիւրքիայի մէջ կապված դաշնագրութեան սկզբնական աւելուածը որ այսօր ստորագրվեցաւ մեծ վեզիրից և ինձանից։

Ձեր մեծութիւնը կը տեսնի որ III և IV յօդուածների մէջ մտցրած եմ այն փոփոխութիւնները, որոնք նշանակած էր ինձ, չը թոյլատրելու համար Բ. Դրան որ III յօդուածի զօրութեամբ իբրև միջին եկամուտ չը պահանջի IV յօդուածի համեմատ իր վարձով տված կամ ծախած տեղերի եկամուտը։ Մեծ վեզիրը պնդեց որ եկամուտներից ծախքերը անելուց յետոյ աւելացած գումարը գրվի III յօդուածի մէջ. բայց որոշվեցաւ որ յիշված գումարը յետոյ ստուգվելով վաւերացվի։ Այն յօդուածը որով պայման դրվում էր որ եթէ յետոյ կղզին մաքրվի, Թիւրքիան պարտաւոր չի լինի վճարել բարեփոխութիւնների, և այլ բաների համար եղած ծախքերը, ջնջվեցաւ աւելուածից, որովհետև ես ապահովացրի մեծ վեզիրին թէ ձեր գերազանցութիւնը մի նոր յօդուած կը խմբագրի իր ցանկացած իմաստով որ կը համապատասխանի ձեր գերազանցութեան առարկութիւններին։ Ա. Հ. ԼԱՅԱՐԴ։

ԱԻԵԼՈՒԱԾ։—Երկու պայմանագրող կողմերին էլ յայտնի է որ Անգլիան հաւանում է հետևեալ պայմաններին Կիպրոս կղզին գրաւելու և կառավարելու վերաբերութեամբ։

I. Մահմետական կրօնական մի դատարան (մէհկէմէյի շերի) կը լինի կղզում, ինչպէս որ արդէն կար։ Այդ դատարանի մէջ կը դատվին միայն կղզու մահմետական ժողովուրդների վերաբերեալ կրօնական գործերը և ոչ թէ այլ գործեր։

II. Կղզու համար մի մահմետական ներկայացուցիչ (resident) կորոշվի Թիւրքիայի բարեպաշտական հիմնարկութիւնների պաշտօնատանից (էվկաֆ)։ Այդ ներկայացուցիչը, բրիտանական իշխանութենից ընտրված մի վերակացուի գործակցութեամբ, կը կառավարէ մէչէդներին, գերեզմանատներին, մահմետական ուսումնարաններին և Կիպրոս կղզում գտնված կրօնական այլ հիմնարկութիւններին պատկանող կալուածները, ստացվածները և հողերը։

III. Անգլիան տարուց տարի կը վճարի Բ. Դրան ինչ որ աւելանում է այժմ կղզու եկամուտից, կառավարչական (ադմինիստրացիական) ծախքերը հանելուց յետոյ։ Այդ աւելորդը կորոշվի վերջին հինգ տարիների եկամուտի միջին հաշի համեմատ որ որոշված է 22,936 քսակ 1) որը յետոյ ստուգվելով կը հաստատվի ինչպէս որ արժան է։ Այդ հաշի մէջ չեն մտնում օսմանեան թագին պատկանող ստացուածների և անշարժ կալուածների բերած եկամուտները։

IV. Բ. Դուռը կը կարողանայ ազատօրէն ծախել և վարձով տալ հողեր, գետիններ և այլ կալուածներ Կիպրոս կղզում որոնք պատկանում են օսմանեան պետութեան և թագին (արաղեի միրիյէ վէ էմլակի հիւմայուն) որոնց ծախվելուց կամ վարձով տրվելուց գոյացած հասոյթը չի խառնվի III յօդուածում յիշված կղզու եկամուտների հաշի մէջ։

V. Բրիտանական կառավարութիւնը կը կարողանայ իր ձեռնհաս իշխանութիւնների միջոցով գործադրել կալուածների սեփականութեան իրաւունքը որով կը ստացվեն յարմար գներով անմշակ հողեր և հարկաւոր եղած տեղեր հասարակային լաւութիւնների, ինչպէս և հասարակութեան օգտաւոր այլ նպատակներին ծառայելու համար։

VI. Եթէ Ռուսաստանը վերադարձնի Թիւրքիային Ղարսը և այս վերջին պատերազմի ժամանակ Հայաստանում տիրած տեղերը, Անգլիան կը մաքրի Կիպրոս կղզին և 1878-ի յունիսի 4-ի դաշնագրութիւնը այլ ևս զօրութիւն չի ունենայ։ Գրված Կ. Պոլսում, 1878 յուլիսի 1-ին։ (Ստորագրված) Ա. Հ. ԼԱՅԱՐԴ։ ՍԱՎՖԷՏ։

1) Մէկ քսակը 500 ղրուշ (գրեթէ 35 բուբլ է)։

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

—

Բերլինի կոնգրէսը յուլիսի 9-ին վճռեց պարսկական հարցը, կոտորը տալով Պարսկաստանին, Սան-Ստէֆանոյի դաշնագրի համեմատ։ Պարսից շահի դեսպան Մելքօն խան ներկայացրեց կոնգրէսի նոյն օրվայ նըստում Պարսկաստանի պահանջները հետևեալ գրութեամբ։

«Երկար ժամանակ է որ վէճեր լինում էին Պարսկաստանի և Օսմանեան տէրութեան մէջ սահմանագլուխների գծի վերաբերութեամբ որով պէտք է բաժանվեն երկու տէրութիւնները Բայազէթից սկսած մինչև Մօհամարա, պարսկական ծոցի մօտ։ Քիչ էր մնացել որ այդ վէճերը մի քանի անգամ ծանր կերպարանք էին ունեցել, Ն. Մ. շահի կառավարութիւնը իրան պարտաւորութիւն համարելով պաշտպանել իր հպատակներին թափառական ցեղերի, քուրդերի կամ ուրիշների դէմ, որոնք օգուտ են քաղում այդ անորոշ դրութենից գիւղերը կողոպտելու և ամբողջ նահանգներ աւերելու համար։ Այդ թափառական ցեղերը անդադար փոխադրվում են մէկ տեղից դէպի միւս տեղ և ապահովացրած են համարում իրանց անպատիժ մնալը, որովհետև փոփոխակի դիմում են թիւրքաց դատաստանի կամ պարսից դատաստանի օգնութեանը, նայած թէ ինչպիսի չարագործութիւն է կատարված հարևան նահանգներում։ Սրա հետևանքը լինում է մշատև բողոքներ որով և շատ անգամ ապարդիւն քննութիւններ և անվերջ վէճեր երկու տէրութիւնների մէջ։ Սրա հետևանքը այս է լինում մանաւանդ որ ամենագեղեցիկ տեղեր անբնակ են մնում, ամենապտղաբեր հողեր անմշակ են մնում, որովհետև ոչ ոք չէ ուզում իրան վտանգին ենթարկել, բնակութիւն հաստատելով այդ տեղերը, առանց ապահովութիւն ունենալու թէ կը պաշտպանվի տեղական իշխանութիւններից։ Ուրեմն այդ ընդարձակ մշակելի երկիրը որ որչափ գեղեցիկ, նոյնչափ էլ պտղատու է, մնում է այժմ վայրենի դրութեան մէջ, մեծ վնաս տալով քաղաքակրթութեան։ Պարսկաստանը ամենջանք արած է որ վերջ տայ երկրի այդ դրութեան. նա դիմել է Կ. Պոլիս որ սահմանագլխի գիծը որոշվի որպէս զի կարենայ հսկողութեան համար պահականոցներ (փոստ) հաստատել սահմանագլուխներում, և որովհետև իր բողոքները ապարդիւն էին մնում, Անգլիա և Ռուսաստանը միջամտեցին։ Մի մասնաժողով, որի մէջ կային պարսիկ, թիւրք, անգլիացի և ռուս պատգամաւորներ, երկու տարի շարունակ նիստեր ունեցաւ Էրզրում և սահմանների մի գիծ որոշեցին որ Նորին մեծութիւն Պարսից շահը յօժար էր ընդունելու. բայց Բ. Դուռը մինչև այժմ չը վաւերացրեց այդ մասնաժողովի աշխատութիւնը և խնդիրը միշտ մնում է անորոշ։ Նորին մեծութեան կառավարութիւնը հաստատ համոզված է թէ չէ կարելի որ իրերի այդ դրութիւնը երկար տևէ առանց ծանր դէպքեր պատահելու։ Ցանկանալով վերջ տալ այդ դրութեան, կարծում է թէ մի պարտաւորութիւն կատարած կը լինի խնդրելով այս բարձր ժողովից որ հաւանի գծել տալ քարտէզի վրա այն սահմանների գիծը որի վրա համաձայնվել է Էրզրումի մասնաժողովը։ Նորին մեծութիւն շահը կանխաւ յայտնում է որ ինքն ամենամեծ շնորհակալութեամբ կընդունի կոնգրէսի վճիռը, ինչ որ էլ լինի։»

Կոնգրէսը կարճ վիճաբանութենից յետոյ պաշտօնապէս հրաւիրել է օսմանեան Դրան որ ընդունի Պարսկաստանի պահանջած սահմանագիրը, Էրզրումի դաշնագրի պայմաններին համեմատ։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—«Голосъ»-ին Կ. Պոլսից հեռագրում են. «Հայաստանի կառավարութեան համար, հայ պատգամաւորների կոնգրէսին ներկայացրած օրդանական կանոնագրութեան նախագծի մերժելը վերին ատիճանի ճնշող ներգործութիւն ունեցաւ այստեղի հայ հասարակութեան վրա։ Այստեղի հայերը չը գիտեն թէ Հայաստանում մտցնվելու նախագծված վերանորոգութիւնները արդեօք եւրոպական մեծ պետութիւնների երաշխաւորութեան տակ կը դրվեն, թէ Հայաստանը միայն Անգլիայի հովանաւորութեան տակ կը գտնվի։ Ֆրանսիական լիազօրը փորձ փորձեց հականախազգիծներ կայացնել այն մտքով որ Հայաստանում մտցնվելու վերանորոգութիւնները պետութիւնների ընդհանուր երաշխաւորութեան տակ լինեն, բայց լորդ Բիկոնսֆիլդը հակառակվեց այդ բանին ուշադրութիւն դարձնելու, յայտնելով որ Ասիայի վերաբերութեամբ Թիւրքիան կապված է դաշնագրերով Անգլիայի հետ։ Այս ազդարարութիւնը սարսափելի ներգործութիւն ունեցաւ բոլոր լիազօրների վրա։ Հայերը Փոքր-Ասիայում հաստատ վճռել են ընդհանրապէս գաղթել ռուսաց Հայաստան, եթէ հաստատուն և օրինաւոր վերանորոգութիւնները չեն ապահովի հաստատուն կերպով նրանց կեանքը և կարողութիւնը։ Բալկաններից դէպի հարաւ բնակվող բօլգարական ազգաբնակութիւնը ռուսաց իշխանութեանը Ադրիանօպոլում բողոք ներկայացրեց իրանց «Արևելեան Ռումիլիայի» մէջ համարելու դէմ։ Այս նահանգներում բօլգարները հիմնում են իրանց համար մասնաժողովներ յունական մասնաժողովների ինտրիգաների դէմ դնելու համար։ Նրանց պատգամաւորներից մի քանիսը, որոնք գաղտնի կերպով կարողացել են Կ. Պոլիս գնալ, ներկայացան ռուսաց դեսպանատանը պատմելու իրանց թշուառ դրութիւնը և իրանց սպասող տխուր վիճակի մասին. նրանք յայտնեցին, որ կամենում են քաղաքականապէս միացած լինել Բալկաններից դէպի հիւսիս իրանց եղբայրների հետ։ Իշխան Լոբանով-Ռոստովսկի, իր պատասխանի մէջ, խոստացաւ միայն այս բողոքները և գանգատները Բերլին ուղարկել իշխան Գորչակովին։»

—«Голосъ» լրագրին Կ. Պոլսից հեռագրում են երեքշաբթի յուլիսի 4-ին (16-ին) հետևեալը. «Ոչ միայն Բէրայի, այլ և Ստամբօլի բոլոր չըրջաններում, ամենածանր խօսակցութեան առարկան դեռևս շարունակվում է լինել անգլօ-թիւրքաց դաշնադրութիւնը։ Մահմետականները, մանաւանդ հին-թիւրքերը մեծ դրգռմունքով են վերաբերվում դէպի այդ դաշնադրութիւնը, որը դժուար էր սպասել. մինչև անգամ «Երիտասարդ Թիւրքիան» չէ ծածկում իր դժգոհութիւնը անգլիացիների դէմ։ Թէ նրանք և թէ ուրիշները միաձայն մեղադրում են Անգլիային այն բանի մէջ, որ նա ձգտում է թիւրքաց կայսրութեան փոքր-ասիական նահանգները դարձնել հանդուցեալ Օսմինդիական ընկերութեան գրասենեակի բաժին։ Ինչպէս այժմ յայտնվեցաւ, անգլօ-թիւրքաց դաշնադրութիւնը ստորագրել էին մայիսի 14-ին (26-ին) Սադիկ-փաշան և անգլիական դեսպան պ. Լայարդը, մինչև անգամ ոչ թէ Բ. Դրան, այլ անգլիական դեսպանատան չինութեան մէջ։ Առաջին և ամենաէական օգուտը քաղեց այս դաշնադրութենից Սադիկ-փաշան, որին անգլիական կառավարութեան կողմից յանձնված էր բաւական նշանաւոր գումար, այն պայմանով որ նա լուռ մնայ և ամենախիստ գաղտնիքի մէջ պահէ այս համաձայնութիւնը, մանաւանդ ֆրանսիական դեսպանատնից, որի հետ Սադիկ-փաշան միշտ լաւ յարաբերութիւնների մէջ էր։ Փարիզի նախկին դեսպանը, ինչպէս ձեզ յայտնի է, իզուր չը ստացաւ անգլիական ոսկի և լուռ մնաց մինչև իր ժամանակը։»

—«Голосъ» լրագրին Կ. Պոլսից հեռագրում են հետևեալը. «Այստեղ, Բէրայում, առաւել ամենքին գրգռում է կոմս Բիկոնսֆիլդի վարմունքը կոնդրէսում։ Եւ իսկապէս, յիշեցէք նրա յարաբերութիւնները Ֆրանսիայի և Իտալիայի ներկայացուցիչների հետ, որոնց հետ նա քննում էր խնդիրներ, արդէն զրպանի մէջ դաշնադրութիւն ունենալով, և չէք զարմանայ, որ կոմս Բիկոնսֆիլդին այստեղ նրան չը շողոքորթող մականուններ են տալիս։ Միդհաթականները արդէն սկըսում են գործածել անգլօ-թիւրքաց դաշնադրութիւնը յօգուտ իրանց։ Թէ սրանով և թէ դաշնադրութեան պատճառով մահմետականների ծագած գոռունքներով, բացատրում են այնանթիւ բանտարկութիւնները, որ կատարվեցան այս վերջին օրերում։ Ստամբօլում ադը ցրած է պահապանների թիւը և զօրաբաժինները շուտ շուտ «զինուորական զբօսանքներ» են անում փողոցներում։ Գիշերները անդադար խուզարկութիւններ են լինում և դուրս են բերվում կասկածելի անձինք։ Երէկ երկու գեներալներ բանտարկվեցան, որոնք, ինչպէս ասում են յարաբերութիւններ են ունեցել միդհաթականների հետ։ Լազիստանից եկած պատգամաւորները վերջնականապէս ընդհարվում էին պ. Լայարդի հետ։ Լազերը վճռական կերպով յայտնեցին, և կարծես ոչ առանց համաձայնութեան պ. Լայարդի, որ չեն տայ Բաթումը և կընդդիմադրեն ուժով։ Նոքա վճռել են մտնել Անգլիայի հովանաւորութեան տակ. նոքա կը գլխեն Թիւրքաց դրօշակը և կը կանգնեցնեն անգլիական դրօշակը, կամենալով ցոյց տալ սրանով, որ կը պատերազմեն ռուսների հետ Անգլիայի կողմից և որպէս նրա հովանաւորութեան տակ։ Ամեն միջոցներ արդէն գործ են դրված ընդհանուր ապստամբութիւն անելու համար, այն դէպքում, եթէ որ ռուսները կը կամենան զինաւորված ուժով տիրել Բաթումին։ Անգլիական հիւպատոսը Տրապիզոնում վաղուց է արդէն որ պատրաստում է լազերի ընդդիմադրութիւնը, Լօնդոնի կաբինէտի հրամանով և պ. Լայարդի գործակցութեամբ։ Ապստամբութիւնը կը ծագի հէնց որ ռուսաց զօրքերը կը գնան Բաթումի վրա։ Բ. Դուռը կատարելապէս Անգլիայի հետ միասին է գործում և ամեն կերպով կօգնէ այս չարժումին։»

—Բերլինից հաղորդում են յուլիսի 11-ին որ կոնգրէսը որոշել է յանձնարարել Թիւրքիային որ եւրոպական ֆինանսական մի մասնաժողով հաստատի Կ. Պոլսում։

—Բերլինից հաղորդում են յուլիսի 12-ին որ կոնգրէսը միաձայնութեամբ վճռել է մի մասնաժողով հաստատել Կ. Պոլսում օսմանեան արժէթղթերի ունեցողների բողոքները քննելու համար։ Ռուսաստանի առաջարկութիւնը թէ տէրութիւնները յանձնառու լինեն հսկել որ Թիւրքիան գործադրի դաշնադրութիւնը, չընդունվեցաւ։

ՑԱՑՏ ԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱԼԼԵՐԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹՈՒՄ ծախվում են ՍՊԻՏԱԿ ԲՈՒՄԱՋԵՑԱ վինուորականների շորերի համար արշինը 1 ր. և բարձր, ՈՒԻՆՍԻ շորերի համար և ՊԱՐՈՒՍԻՆ արշինը 50 կ., ՓՕՇԻՆԵՐ տարափոխիկ հիւանդութիւնների դէմ և ԽԻՆԱՑԻ ԲԱԼԶԱՄԵՆ (իւղ) 1¼ ր., ՍԱՊՕՆ 10 կ. և բարձր. ՅԻՏԲԱՂ մագնեցի 1½ ր., ԲԻՍԿՎԻՏՆԵՐ 1 ր. և բարձր, ՖԻԼՏՐՆԵՐ 4-40 ր., երկաթեայ մահճակալներ 5 ր. և բարձր, ազոցներ 50 կ. և բարձր, ճանապարհի ԱՄԱՆՆԵՐ գիւժինը 3 ր., ԳԻՒԶՆԵՐ արդը 15 կ. և բարձր, ԲԼՎՕԼՎԵՐՆԵՐ 6 ր. և բարձր 1000 ասեղ 80 կոպէկ, արական ԹԱՄԲԵՐ 40 ր. և բարձր. ԻԴԱԿԱՆՆԵՐ 70 ր. և բարձր, ծածկոցներ, մակենաօչներ, երեխաների շորեր 4 ր. և բարձր. հիանալի վերարկուներ 12 ր. և աւելի, վերականգնող ՄԱԿՄԱՍՏԵՐ 2 ր., կողպէքներ և պօղնօսներ 10 կ. և բարձր, բամ, կօնեակ, պօրտվէյն, խերես և անգլիական օղի 1½ ր., ՊԱՆԻՐ չեսաեր 60 կ. և բարձր. Շուտով կը մնի լաւ թէյ 1 ր. ֆունտը։

15—20

ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱԼԼԵՐԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹՈՒՄ ծախվում են՝ ԿԱՐԲՕԼԵԱՆ հեղուկ և փոշի տարափոխիկ հիւանդութիւնների դէմ 1½ ր., ԽԻՆԱՑԻ ԻՒՂ 1¼ ր., ցեղրատ մագնեզիայի 2 ր., ՐՕՄ, ԿՕՆԻԱԿ, ՊՕՐՏՎԷՅՆ, ԽԵՐԵՍ և անգլիական օղի 1½ ր., ճանապարհի ամաններ գիւժինը 3 ր., թէյի գդալներ (չեն սեւանում) 1½ ռուբլ և բարձր, ճանապարհի դանակներ 80 կ., ճանապարհի ֆիլիտրներ 4 կ., մատիտներ հատը 1 կոպ., երկաթի գրիչներ 18 հատը 5 կ., ասեղներ 1000 հատը 80 կ., ծածկոցներ, մանկական շորեր և չը թրջվող վերարկուներ 4 ռուբլ և բարձր, գլխարկներ և ժիլետներ 75 կ. և բարձր, կտաւ 10 ր. և բարձր, արիկո 1 ր. և բարձր, ՊԱՐՈՒՍԻՆ 60 կ. և բարձր, բամազէի 1 ր. արշինը, շղթաներ (Աբիսինիայի ոսկուց) 50 կ. մինչև 3 ր.։ Մի և նոյն խանութում շուտով կը ստացվեն ՄԱՀՃԱԿԱԼՆԵՐ 6 ր. և բարձր, բիսկվիտներ, մեծ ֆիլտրներ և վերականգնողական անուանված մի դեղ, և այլն։

20—20

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ յայտնում է քաղաքի բնակիչներին, որ գնահատական հարկի 1875 թ. երկրորդ կէսի պակասորդների հաւաքելը Դումայի վճռի համեմատ յանձնած է նահանգական քարտուղար Պլէքսանդր Մելիայլովիչ Զաբարովին։ Քաղաքային վարչութիւնը հրաւիրում է կալուածատէրերին, որոնք պէտք է վճարեն պակասորդներ, յանձնեն փողը Զաբարովին և նրանից ստած ապահովագիրներ ստանան։ Հակառակ դէպքում պ. Զաբարովին իրաւունք է տուած անկանոն հարկատուների հետ վարվել քաղաքային կանոնադր. 131 յօդ. համեմատ։ Թիֆլիսի գլխաւոր պ. Պոլիցմէյստերին յայտնած է, որ նա դործակցէ պ. Զաբարովին հարկաւոր դէպքում։ Այն կալուածների ցուցակը, որոնք պէտք է պակասորդը վճարեն, պակասորդների քանակութիւնը իւրաքանչիւր կալուածից և տուդանքները վարչութեան անդամի ստորագրութեամբ յանձնված են պ. Զաբարովին։ Պ. Զաբարովի փողեր կընդունի իր դրասենեակում, որ գտնվում է քաղաքային վարչութեան տան մէջ, առաւօտեան 9—12 ժամը։ Պ. Զաբարովի բացակայութեան ժամանակ փողը կարելի է մոցնել վարչութեան դանձարանը։

3—3

ՀԱՒԱՔՈՒՄ ԵՄ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ որոնց նշանակութիւնը և արժանաւորութիւնը մեր ազգի համար մանրամասն կը բացատրեմ իր ժամանակին։ Առ այժմ 300-ի չափ հաւաքած ունենալով դիմում եմ դէպի մեր բանասէրները խոնարհաբար խնդրելով աւելի մօտ ծանօթալ ժողովրդի հետ, նրանցից հաւաքեն և ուղարկեն ինձ մանաւանդ բուն ազգային հանելուկները, որոնց հետ պէտք է լինի Հանելուկների ԴԺՈՒՍՐ ԲԱՌԵՐԻ ԵՒ ՄՏՔԻ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆԸ։ Աշխատութիւնը չը խնայեցողների անուն և ազգանունները կը տպագրուին գրքում և կուղարկվեն նրանց համար մի մի օրինակ ձրի։

Գրիգոր քահանայ Մանդակունի։

Իմ հասցէն՝ Тифлисъ. Авлабаръ. священику Теръ Григору Мандакуни.

Հարկաւոր են Նուխու գաւառում 4 ուսուցիչ, իւրաքանչիւրը երեք առարկայի համար հայոց և ռուսաց լեզուների ու թւաբանութեան։ Պայմանների մասին կարելի է խնդալ Նուխի Աւետիք Տէր-Յակովբեանցից։

Օգնական Թեմական տեսչի Աւետիք Տէր-Յակովբեանց։

МАГАЗИНЫ ОТДАЮТСЯ ВЪ НАЕМЪ

ПО ОЧЕНЬ ДЕШЕВЫМЪ ЦѢНАМЪ

ВЪ ГАЛЛЕРЕѢ АРЦРУНИ.

ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱԼԼԵՐԵՈՒՄ

ՀԱՏ ԷԺԻՇՆ ԳՆԵԼՈՎ, ՎԱՐՁՈՎ ԵՆ ՏՐՎՈՒՄ ԽԱՆՈՒԹՆԵՐԸ

Երևանայ տուրը ԳԱՅԵԱՆԵՑՆ ՕՐԻՈՐԴԱՑ ԴՊՐՈՑԻ երեք դասատան համար հարկաւոր են մի ՈՒՍՈՒՑԻՉ շաբաթական 24 դասով ռուսաց լեզուից երկրորդ դասատնում, թւաբանութենից, աշխարհագրութենից և ընդհանուր պատմութենից, և մի ԿԱՐԳԱՊԱՀ ՎԱՐԺՈՒՀԻ շաբաթական 16 դասով ռուսաց լեզուից պատրաստական և առաջին դասատուների և ձեռագործութեան համար իւրաքանչիւրը տարեկան 500 ռուբլ ռոճիկով. ցանկացողները թող շտապեն յայտնել դպրոցի տեսչութեան այս հասցեով.—Въ Эривань Протоіерею Іосифу Мелянцу.

3—3

КОНТОРА ГАЛЛЕРЕИ АРЦРУНИ

ОТКРЫТА КАЖДЫЙ ДЕНЬ КРОМѢ ВОСКРЕСНЫХЪ

ДНЕЙ отъ 9 часовъ утра до 2 часовъ пополудни

ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱԼԼԵՐԻԱՅԻ ԳՐԱՍԵՆԵԱԿԸ

ԲԱՑ Է ԱՄԵՆ ՕՐ ԱՌԱՒՕՏԵԱՆ 9 ժամից մինչև 2 ժամ

կէսօրից յետոյ բացի ԿԻՐԱԿԻ օրերից։

ՅՈՒԼԻՍԻ 14. ՏԵՂԵԿԱՑՈՅՑ ԹԻՖԼԻՍ 1878.

ԹԻՖԼԻՍԻ ՎԱՃԱՌԱՆՈՑ
(Յուլիսի 13-ին)

	Ր.	Կ.
Ոսկի (պօլումպերիալը)	8	5
Հին 82 պր. մ. արժ. 1000 մ.	1500	—
Հին 20 կ. 72 պր. 1000 »	1300	—
Վիգրիշնի 5% առաջի փոխառութեան տոմ. 100 »	233	—
Երկրորդ 5% վիգրիշնի »	235	—
Մարսելի կուրսը 237—	100	—
Լօնդօնի կուրսը Օդեսայի վրա.	10	67
Վենայի կուրսը ժէ 112 գլ.	121	—
Դաւրեժի բարաթը. . .	5	90
Առևարական բանկի ակցիան 200 մ. . . .	300	
Փօթի Թիֆլիսեան երկաթուղու ակցիան 125 մ.	125	—
Շաքարը բրօցկու . .	7	80
» միւս տեսակը.	7	70
» չաքարաւազը.	6	20
» տրանդիաբ. .	6	50
» մաքսը վճարած	12	—
Բամբակը Երևանու Ամերիկայի սերմից. . .	8	50
Միւս տեսակը հին սերմից.	7	50
Բուրդը թուչի . . .	8	—
» թարաքամի .	4	20
Աչիւր Շորագալու . .	1	40
» Երևանի. . . .	—	—
Գարին.	1	20
Մոմը բնաճարպի (стеар.)	13	20
Մեղաքաղ Նուխվայ . .	180	—
Կախեթուները. . . .	100	—
Կակոնը Նուխվայ (բոժ.)	45	—
Ֆրիզոնը (լասը) Ագուլեաց	55	—
Կոֆէն մօկօի. . . .	27	—
» լիվանի . . .	22	--
» մարտինկօյինը	20	—

ՀԵՌԱԳԻՐ

	Ր.	Կ.
Կովկասի և Անդրկովկասի քաղաքները . . .	1	
Ռուսաստան .	2	
Աստրիա . .	3	
Անգլիա. . .	4	
Գերմանիա. . .	2	88
Ֆրանսիա . . .	3	75

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ՄԱՆԿԱԲԱՐՁԱԿԱՆ ԴՊՐՈՑ
(Վէրայի վրա № 38)

Ծննդականների ընդունելութիւնը ցերեկվայ և գիշերվայ ամեն ժամանակ, օրը 50 կոպէկ վարձով, իսկ չքաւորներին անվարձ։ Առանձին սենեակներում ամիսը 30—50 ռուբլ։ Կանանց հիւանդութիւնների բաժանմունքի մէջ վարձը ընդհանուր սենեակում 18 ռուբլ, իսկ մասնաւոր սենեակներում 30 ռուբլ ամսական։

Երթևեկ հիւանդ կանանց և երեխաների ընդունելութիւնը ամեն օր, բացի կիրակի օրերից, 9½ մինչև 11 ժամ առաւօտեան։ Բժշկապետ Ա. Անով։

ՓՕԹԻ-ԹԻՖԼԻՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

Թիֆլիսից մինչև Փօթի (ճանապարհորդների գնացքը) 9 ժամին 21 րոպէ առաւօտեան։ Մինչև Միխայլովօ (խառն գնացքը) երեկոյեան 5 ժամ. 18 րոպէ։

	առաւօտ.	երեկոյեան
Թիֆլիսից . .	9. 21	5. 18
Գօրի . . .	11. 58	9. 43
Միխայլովօ.	1. 29	11. 57
Ռիօն . . .	6. 47	
Փօթի . . .	9. 40	

	առաւօտ.	
Փօթիից . .	9. 13	
Ռիօն . . .	12. 13	
Միխայլովօ. .	5. 39	1 37
Գօրի. . . .	7. 5	4 8
Թիֆլիս. . .	9. 31	7 56

Թիֆլիս գալիս է առաջին գընացքը երեկոյեան 9 ժ. 31 ր. երկրորդը՝ առաւօտեան 7 ժ. 56 ր.

Տեղերի գինը՝ Թիֆլիսից

	Բ կլաս.	II կլ.	III կլ.
Մցխէթ .	90	68	38
Գօրի. . .	3. 20	2. 40	1. 33
Սուրամ.	5. 22	3. 92	2. 18
Ռիօն. . .	9.	6. 75	3. 75
Փօթի . .	13. 1	9. 75	5. 42

ՓՕՍՏ

Ամեն տեսակ թէ նամակներ, թէ լրագիրներ և թէ ծանր փաստ ամեն տեղ ուղարկելու, ընդունվում են ամեն օր, առաւօտեան 8 ժամից մինչև 1 և կէսօրից յետոյ 3 ժամից մինչև 7։ Իսկ կիրակի օրերը հատարակ նամակներ մինչև 10 ժամ առաւօտեան և 3—7 երեկոյեան։

Ռուսաստանից և Արտասահմանից փօստը ստացվում է Թիֆլիսում ամեն օր։ Բագուի տրակտից՝ երեքշաբթի և շաբաթ օրերը։ Երևանի տրակտից՝ երկուշաբթի, հինգշաբթի և շաբաթ։ Փօթի-Թիֆլիսեան երկաթուղուց ամեն օր։ Նուխու տրակտից՝ չորեքշաբթի և կիրակի։ Բելիկլիսի տրակտից՝ երեքշաբթի և շաբաթ։

ՆԱՄԱԿՆԵՐ

	Կոպ.
Բաց նամակը արժէ .	4
Ռուսաստան և Եւրոպայի բոլոր երկիրները նամակը արժէ	8
Ամերիկա	8
Պարսկաստան . . .	8
Հնդկաստան . . .	70
Եգիպտոս	27

ԲԺՇԿԱՆՈՑ

Հիւանդների ընդունելութիւնը առաւօտ 9 ժամից մինչև 1 կէսօրից յետոյ։

Երկուշաբթի. Վէրմիչէվ և Գօրալեվիչ ներքին հիւանդութիւններ, Գուշարեանց վիրաբուժական և ականջի հիւանդութիւններ։

Երեքշաբթի. Վէրմիչէվ ներքին հ. Ըէյս աչքի հ. 9—11 ժամ, Ա. Բախուտով կանանց, երեխաների հ. և մանկաբարձութեան։

Չորեքշաբթի. Վէրմիչէվ ներքին հ. Բակատ կրծքային և ղղային։

Հինգշաբթի. Վէրմիչէվ ներքին հ. Գավրօն ակից կանանց և մանկաբարձութեան, 9—10 ժամ, Բակատ վեներական և կաշու հ. Օբրէխտ ատամնացաւեր։

Ուրբաթ. Վէրմիչէվ ներքին հ. Բախուտով մանկաբարձութեան, կանանց և երեխաների հ. Գուշարեանց օիֆիլիտական և միզային գործարանների հ.

Շաբաթ. Վէրմիչէվ ներքին հ. Ըէյս աչքերի հ. Բակատ կրծքային և ղղային հիւանդութիւններ։

«ՄՇԱԿԻ» ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

—

—ՎԱՂԱՐՇԱՊԱՏ։ Ցեղացի։ Նամակը հնացած է, չենք տպի, գրեցէք մէկ արիր։ Կաշառակերութիւնը չարունակվում է, գրում էք դուք, այդ նոր բան չէ։

—ՇՈՒՇԻ. ***. Առանց ձեր գրելու էլ մենք գիտենք, որ նա այդտեղ մնում է չնորհիւ տուած կաշառքների, որի քանակութիւնը բաւական մեծ է։

—ՀԻՆ-ՆԱԽԻՋԵՒԱՆ. Սոփոկլէս. Նամակը ստացանք. գեռ չենք կարդացել։

—ԹԻՖԼԻՍ. Վահ. Այդքան էլ սպառնալիք։ Դօն-Կիխօտներ չատ ենք տեսել։ Խորհուրդ տուէք ձեր բարեկամներին, որ ձեզ խելագարների տունը ուղարկեն։ Շնորհակալ եղէք, որ գոնէ այս պատասխանին արժանացաք։

Дозволено Цензурою 13 Іюля 1878 г. Тифлисъ Типографія Мартиросіанца Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ